ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 08 >> սեպտեմբերի 2014 թվականի N 217 -Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> N 224-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունվարի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի և ատեստավորման ընթացակարգերը հաստատելու մասին>> N 24-Ն որոշման N 1 հավելվածի 60-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 3 որոշումը, եզրակացությունը և Արտաշես Ներսիսյանի 2014 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի սեպտեմբերի 8-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Ներսիսյանի լիազորությունները:
2. Արտաշես Ներսիսյանին 2014 թվականի սեպտեմբերի 8-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝